****

25.09.2013թ. N 1 նիստ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Հայաստանում «Ռոսսոտրուդնիչեստվո» ներկայացուցչության ղեկավար, պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր Վիկտոր Վլադիմիրի Կրիվոպուսկովին ԵՊԼՀ պատվավոր պրոֆեսորի կոչում շնորհելու վերաբերյալ:

2. Ուսումնական պլանների հաստատում:

3. Գիտական խորհրդի տարեկան պլանի հաստատում /Զեկ. Լ. Ֆլջյան/:

4. «ԵՊԼՀ-ում ասպիրանտների/հայցորդների ընդունելության, ուսուցման և կրեդիտների կուտակման կանոնակարգ»-ի վերահաստատում /Զեկ. Լ. Ֆլջյան/:

5. 2013-2014 ուս.տարվա ԵՊԼՀ-ի բակալավրիատի ընդունելության արդյունքների ամփոփում /Զեկ. Ռ. Գևորգյան/:

6. 2013-2014 ուս.տարվա մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփում /Զեկ. Ն. Տատկալո/:

7. Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ /ԻԳ.00.02/ և Միջազգային հարաբերություններ /ԻԳ. 00.04/ մասնագիտություններով ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննությունների հարցաշարերի հաստատում /Զեկ. Լ. Բաբայան/:

8. Մրցույթ՝ պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար:

9. Ընթացիկ հարցեր:

*****

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի «ՌՈՍՍՈՏՐՈՒԴՆԻՉԵՍՏՎՈ» Դաշնային գործակալության ներկայացուցչության ղեկավար, հասարակական գիտությունների

դոկտոր Վիկտոր Վլադիմիրի Կրիվոպուսկովին «Պատվավոր պրոֆեսորի» կոչում շնորհելու վերաբերյալ հարցը՝ ԵՊԼՀ-ի գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի «ՌՈՍՍՈՏՐՈՒԴՆԻՉԵՍՏՎՈ» Դաշնային գործակալության ներկայացուցչության ղեկավար, հասարակական գիտությունների դոկտոր Վիկտոր Վլադիմիրի Կրիվոպուսկովին՝ համաձայն «ԵՊԼՀ-ում պատվավոր կոչումներ շնորհելու կանոնակարգ»-ի 1.4. կետի, շնորհել «Պատվավոր պրոֆեսորի» կոչում հայ-ռուսական մշակութային եւ կրթական կապերի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի, ինչպես նաև ԵՊԼՀ–ում ռուսաց լեզվի կրթական և հետազոտական ծրագրերում ակտիվ մասնակցության համար:
2. Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի «ՌՈՍՍՈՏՐՈՒԴՆԻՉԵՍՏՎՈ» Դաշնային գործակալության ներկայացուցչության ղեկավար, հասարակական գիտությունների դոկտոր Վիկտոր Վլադիմիրի Կրիվոպուսկովին գրանցել «ԵՊԼՀ-ի պատվավոր պրոֆեսորների և դոկտորների» Պատվո գրքում:

*****

Լսելով և քննարկելով ԵՊԼՀ-ի բակալավրիատի, մագիստրատուրայի և հետբուհական կրթության մասնագիտությունների ուսումնական պլանների հաստատման վերաբերյալ հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ԵՊԼՀ-ի բակալավրիատի, մագիստրատուրայի, հետբուհական կրթության մասնագիտությունների վերամշակված ուսումնական պլանները

*****

Լսելով և քննարկելով Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը 2013-2014 ուսումնական տարվա գիտական խորհրդի աշխատանքային պլանի հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել 2013-2014 ուսումնական տարվա գիտական խորհրդի տարեկան աշխատանքային պլանը /գիտական խորհրդի աշխատանքային պլանը կցվում է/:

*****

Լսելով և քննարկելով Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Լ. Ֆլջյանի հաղորդումը «ԵՊԼՀ-ում ասպիրանտների/հայցորդների ընդունելության, ուսուցման և կրեդիտների կուտակման կանոնակարգ»-ը ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ՝ գիտական խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ուժը կորցրած ճանաչել 04.07.2013թ. հ.10 գիտական խորհրդի նիստի որոշմամբ հաստատված «ԵՊԼՀ-ում ասպիրանտների/հայցորդների ընդունելության, ուսուցման և կրեդիտների կուտակման կանոնակարգ»-ը:
2. Առաջնորդվել 14.04.1999թ. ընդունված Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենքով և 14.12.2004թ. ընդունված Հայաստանի

Հանրապետությունում բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին օրենքով:

3. Առաջնորդվել.
   - ՀՀ-ում ասպիրանտուրայի ընդունելության կարգով (հաստատված ՀՀ Կրթության և գիտության նախարարի 2006 թ. սեպտեմբերի 15-ի N 740-Ն հրամանով),
   - ՀՀ-ում ասպիրանտուրայում և դոկտորանտուրայում ուսուցման կարգով (հաստատված ՀՀ Կառավարության 2001 թվականի հուլիսի 20-ի N 662 որոշմամբ), Ատենախոսությունների թեմայի հաստատման կարգով (գրանցված ՀՀ Արդարադատության նախարարության կողմից 18.07.2000թ. հ. 30300066 ներքո, փոփոխված ՀՀ Կառավարության 21.10.2010թ. հ. 1436-Ն որոշման համաձայն),
   - Որակավորման քննությունների կարգով (հաստատված ԲՈՀ-ի 27.06.2000թ., հ. 82 հրամանով, գրանցված ՀՀ Արդարադատության նախարարության կողմից 18.07.2000թ. հ. 30300065 ներքո),
   - Բարձրագույն և հետբուհական կրթություն իրականացնող ուսումնական կամ գիտական կազմակերպություններում ասպիրանտուրան պետական պատվերի շրջանակներում ուսումնառած և ավարտած մասնագետների աշխատանքի տեղավորման կարգով (հաստատված ՀՀ Կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի հ. 581-Ն որոշմամբ),
   - ՀՀ-ում ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի բացման և դադարեցման փորձաքննության չափանիշները հաստատելու մասին հրամանով (գրանցված ՀՀ Արդարադատության նախարարության կողմից 13 հունվարի 2003 թ. հ. 11003007 ներքո, հաստատված ՀՀ ԿԳ նախարարի 23 դեկտեմբերի 2002 թ.N 694-Մ հրամանով):

*****

Լսելով և քննարկելով ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ռ. Գևորգյանի հաղորդումը ԵՊԼՀ-ի 2013-2014 ուսումնական տարվա

բակալավրիատի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն ընդունող հանձնաժողովի պատասխանատու քարտուղար Ռ. Գևորգյանի հաղորդումը ԵՊԼՀ-ի 2013-2014 ուսումնական տարվա բակալավրիատի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ:

*****

Լսելով և քննարկելով Մագիստրոսական ծրագրերի իրականացման դեպարտամենտի ղեկավարի ժ/պ Ն. Տատկալոյի հաղորդումը 2013-2014 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Ընդունել ի գիտություն Մագիստրոսական ծրագրերի իրականացման դեպարտամենտի ղեկավարի ժ/պ Ն. Տատկալոյի հաղորդումը 2013-2014 ուսումնական տարվա մագիստրատուրայի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ:

*****

Լսելով և քննարկելով ասպիրանտուրայի վարիչի ժ/պ Լ. Բաբայանի հաղորդումը Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ /ԻԳ.00.02/ մասնագիտությամբ ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության հարցաշարի հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ /ԻԳ.00.02/ մասնագիտությամբ ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության հարցաշարը /հարցաշարը կցվում է/:

*****

Լսելով և քննարկելով ասպիրանտուրայի վարիչի ժ/պ Լ. Բաբայանի հաղորդումը Միջազգային հարաբերություններ /ԻԳ. 00.04/ մասնագիտությամբ ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության հարցաշարի հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Միջազգային հարաբերություններ /ԻԳ. 00.04/ մասնագիտությամբ ասպիրանտուրայի ընդունելության մասնագիտական քննության հարցաշարը /հարցաշարը կցվում է/:

*****

<u>ԼՍԵՑԻՆ</u> - Համալսարանի գիտքարտուղարի ժ/պ Կարինե Ելոյանին, որը գիտխորհրդի քննարկմանը ներկայացրեց անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի դոցենտ, բանասիրական գիտությունների դոկտոր Լուսինե Հրանտի Ֆլջյանի դիմումը նրան պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու համար:

Քվեարկության համար գիտխորհրդի անդամներից ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝

Ա. Բարլեզիզյան - նախագահ

Կ. Աբրահամյան - անդամ

Ա. Աբրահամյան - անդամ

Գիտական խորհրդի 54 անդամներից ներկա էին 46-ը, որոնցից քվեարկեցին՝ “26”-կողմ, “18”- դեմ, անվավեր է ճանաչվել “2” քվեաթերթիկ:

Բաց քվեարկությամբ միաձայն հաստատեցին փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

ՈՐՈՇԵՑԻՆ - 1. Հաստատել փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքները:

2.Հաշվի առնելով, որ Լուսինե Հրանտի Ֆլջյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է ՀՀ Կառավարության 2001թ. հուլիսի 9-ի թիվ 615 որոշմամբ հաստատված “ՀՀ գիտամանկավարժական կադրերի պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի” 6-րդ հոդվածի “ա” ենթակետին, բանասիրական գիտությունների դոկտոր **Լուսինե** Հրանտի Ֆլջյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում “Լեզվաբանություն” մասնագիտությամբ և ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ հաստատելու ԵՊԼՀ-ի գիտական խորհրդի որոշումը:

*****

Լսելով և քննարկելով Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի պրակերի հրատարակման ժամկետների սահմանման մասին հարցը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հանձնարարել գիտական մասին սահմանել ժամկետներ Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի յուրաքանչյուր պրակի հրատարակման համար և տեղակացնել ամբիոններին այդ մասին:

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի 2006-2010թթ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սյուզաննա Հրաչի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին:

*****

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Վերահաստատել համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի 2006-2010թթ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սյուզաննա Հրաչի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «**Անգլալեզու «համալսարանական վեպի» ժանրային յուրահատկությունը**» /Ժ. 01.07. «Արտասահմանյան գրականություն»/:

2. Դիմել ԲՈՀ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե .... Գուլանյանին /Ժ. 01.07. «Արտասահմանյան գրականություն»/ համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի 2006-2010թթ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սյուզաննա Հրաչի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն ստանալու համար:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Զորի Լեոնիկի Բարսեղյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Վերահաստատել Մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Զորի Լեոնիկի Բարսեղյանի

թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «**Անգլերենի ակադեմիական գրագրության ուսուցման տեխնոլոգիաները լեզվական մասնագիտությունների համար**» /ԺԳ. 00.02. Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա (անգլերեն լեզու)/:

Գիտական ղեկավար՝ մ.գ.դ., պրոֆեսոր Իգոր Կարապետի Կարապետյան

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը Կոնֆուցիուսի ինստիտուտի գլխամասային գրասենյակի (ՀԱՆԲԱՆ) 2012թ. չինարենի դասագրքի նախագծի համաձայն ԵՊԼՀ ԿԻ-ի «**Չինական հիերոգլիֆների հիմնական դասակարգման ուսուցողական տետր**»-ի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Կոնֆուցիուսի ինստիտուտի գլխամասային գրասենյակի (ՀԱՆԲԱՆ) 2012թ. չինարենի դասագրքի նախագծի համաձայն ԵՊԼՀ ԿԻ-ի «**Չինական հիերոգլիֆների հիմնական դասակարգման ուսուցողական տետր**»-ը երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Բանասիրություն» 1(28) պրակի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Բանասիրություն» 1(28) պրակը երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Մանկավարժություն և հասարակական գիտություններ» 2(29) պրակի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի «Մանկավարժություն և հասարակական գիտություններ» 2(29) պրակը երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Ռ. Խաչատրյանի հեղինակած «**Ռազմավարական պլանավորումը բարձրագույն ուսումնական հաստատություններում**» ուսումնամեթոդական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի վարիչ, բ.գ.թ. Ռ. Խաչատրյանի հեղինակած «**Ռազմավարական պլանավորումը բարձրագույն ուսումնական հաստատություններում**» աշխատությունը ուղարկել հաստատման ՀՀ ԿԳ նախարարություն որպես ուսումնամեթոդական ձեռնարկ և երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի դոցենտ Ռ. Գևորգյանի «**ԱՄՆ պատմություն**» ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի դոցենտ Ռ. Գևորգյանի «**ԱՄՆ պատմություն**» աշխատությունը ուղարկել հաստատման ՀՀ ԿԳ նախարարություն որպես ուսումնական ձեռնարկ և երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնի կողմից ներկայացրած «**И.С.Тургенев: русская и национальные литературы**» միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութերի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ռուսաց լեզվի և մշակույթի կենտրոնի կողմից ներկայացրած «**И.С.Тургенев: русская и национальные литературы**» միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութերը երաշխավորել տպագրության:

****

<u>29.10.2013թ. N 2 նիստ</u>

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. 2012-2013 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման և գարնանային քննաշրջանի արդյունքների ամփոփում /Զեկ. Բ. Մարգարյան/:

2. Հեռակա ուսուցման ուսումնական պլանների հաստատում /Զեկ. Բ. Մարգարյան/:

3. 2013-2014 ուսումնական տարվա հեռակա ուսուցման բաժնի ընդունելության արդյունքների ամփոփում /Զեկ. Ս. Մարգարյան/:

4. ԼՇԿ կենտրոնի տարեկան հաշվետվություն /Զեկ. Ս. Կարաբեկյան/:

5. Ընթացիկ հարցեր:

*****

Լսելով և քննարկելով 2012-2013 ուս. տարվա գարնանային քննաշրջանի և 2012-2013 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի հաշվետվությունը՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. 2012-2013 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքների և 2012-2013 ուս. տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ Բ. Մարգարյանի հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. Արձանագրել.

2.1. 2012-2013 ուս. տարվա գարնանային քննաշրջանում գրանցվել է բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ընդհանուր առաջադիմության բարձրացում 2.8 տոկոսով (2012-2013 ուս. տարում՝ 64.7%, 2010-2011 ուս . տարվա 61.9%-ի համեմատությամբ):

2.2. 2012-2013 ուս. տարվա գարնանային քննաշրջանում անբավարար գնահատական ստացած և քննություններին չներկայացած ուսանողների քանակը 749 է, նախորդ տարվա 807-ի փոխարեն:

2.3. 2012-2013 ուս. տարվա գարնանային քննաշրջանի ընթացքում ՕԼ, ՌՕԼ, ՄՀ ֆակուլտետներում նկատվել է ուսանողների առաջադիմության աճ համապատասխանաբար 4.5%-ով, 3%-ով, 1,1%-ով, իսկ մագիստրատուրայում նվազել է 13.1%-ով՝ 2011-2012 ուս. տարվա գարնանային քննաշրջանի համեմատ՝ վերջնարդյունքում ապահովելով ընդհանուր առաջադիմության աճ՝ 2.8%-ով:

2.4. Ո ւսուցման պետպատվեր համակարգում սովորող բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների ընդհանուր առաջադիմությունը 2012-2013 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքում նվազել է 2.9%-ով և կազմել՝86.8%, նախորդ ուսումնական տարվա 89.7%-ի համեմատ:

3. Ամփոփելով 2012-2013 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքները և հիմք ընդունելով ֆակուլտետային խորհուրդների հաշվետվությունները՝ 2012-2013 ուս. տարվա գարնանային քննաշրջանի արդյունքները գնահատել բավարար՝

արձանագրելով հետևյալ թերացումները.

3.1. 2012-2013 ուս. տարում նախորդ ուսումնական տարվա համեմատ նվազում է գնահատվել մագիստրատուրայում,

3.2. գարնանային քննաշրջանի արդյունքներով վատ առաջագիմության համար 27 ուսանող հեռացվել է համալսարանից (ՕԼ Ֆակուլտետից 11, ՄՀ ֆակուլտետից 4, ՌՕԼ ֆակուլտետից 9 և մագիստրատուրայից 3 ուսանող),

3.3. վատ առաջադիմություն է գրանցվել հատկապես «Լեզվաբանության ներածություն», «Ընդհանուր լեզվաբանություն», «Հաղորդակցման տեսություն և հոգելեզվաբանություն», «Անգլերենի տեսական հնչյունաբանություն» «Ռ/գ բանասիրություն և գոթերեն», «Անգլերենի տեսական քերականություն» առարկաներից:

4.Ելնելով վերոնշյալից՝

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ

4.1. Լեզվաբանության և հաղորդակցման տեսության, և անգլերենի հնչյունաբանության և քերականության ամբիոններին վերանայել «Լեզվաբանության ներածություն», «Ընդհանուր լեզվաբանություն», «Հաղորդակցման տեսություն և հոգելեզվաբանություն», «Անգլերենի տեսական հնչյունաբանություն» «Ռ/գ բանասիրություն և գոթերեն», «Անգլերենի տեսական քերականություն» դասընթացների առարկայական նկարագրերը,

4.2. Անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնին քննարկել «Գրավոր խոսք» առարկայի դասավանդման դրվածքը՝ հատուկ ուշադրություն դարձնելով մասնագիտական բառապաշարի ներմուծման մեխանիզմներին և ֆակուլտետային խորհրդների քննարկմանը ներկայացնել համապատասխան առաջարկություններ,

4.3. Ֆակուլտետներին, ամբիոններին և ԳՈՒ կենտրոններին մշակել համապատասխան աշխատանքային ծրագրեր արտասահմանցի և սփյուռքահայ ուսանողների ուսումնառությունը պատշաճ կերպով կազմակերպելու համար,

4.4. Դեկաններին՝ ֆակուլտետային խորհուրդներում կազմակերպել քննարկում վերոնշյալ հարցերի շուրջ և արդյունքները ներկայացնել ուսումնական վարչություն,

5.1. ԵՊԼՀ-ում 2011-2012 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորումը բացառապես անց է կացվել «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման» /ՀՀԿԳ նախարարի 2011թ. հոկտեմբերի 31-ի N 1197-Ն հրաման/ կարգի դրույթների համաձայն,

5.2.Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների 50%-ը համալրել են այլ բուհերի և գիտակրթական հաստատությունների առաջատար մասնագետները,

5.3.Բոլոր քննություններն անցկացվել են համաձայն հաստատված ժամանակացույցի,

5.4.Առարկայական հաձնաժողովները ցուցաբերել են մասնագիտական բարձր մակարդակ և անաչառ վերաբերմունք,

5.5.Բոլոր ամբիոնների կողմից ամփոփվել և գնահատվել են ավարտական աշխատանքների նախապատրաստման արդյունքները, ինչը նպաստել է ընդհանրական գնահատականի հիմնավորվածությանը,

5.6.Ուսանողները օտար լեզուներից ցուցաբերել են լեզվական իրազեկությունների բարձր մակարդակ,

5.7.Ըստ ամփոփիչ ատեստավորման բոլոր հանձնաժողովների նախագահների ներկայացված հաշտվետվությունների՝ ամփոփիչ ատեստավորման ընթացքը և արդյունքները կարելի է գնահատել «*լավ*»:

6. Արձանագրել 2012-2013 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման հետևյալ արդյունքները՝

6.1. 2012-2013 ուս. տարում ՕԼ, ՄՀ և ՌՕԼ ֆակուլտետների ուսանողների առաջադիմության աճ 3.2 տոկոսով (2012-2013 ուստարում՝ 93.4%, 2011-2012 ուս. տարվա 90.2%-ի համեմատությամբ):

6.2 .Մագիստրատուրայի ուսանողների առաջադիմության նվազում 1.4 տոկոսով (2012-2013 ուս. տարում՝ 98.6%, 2011-2012 ուս. տարվա 100%-ի համեմատությամբ):

6.3 Ուսուցման պետպատվեր համակարգում առաջադիմությունը կազմում բալակավրիատում 99%, մագիստրատուրայում՝97.6%, իսկ վճարովի համակարգում՝ բալակավրիատում 92%, մագիստրատուրայում՝99%:

6.4 2012-2013 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման ընթացքում ՕԼ ֆակուլտետում արձանագրվել է առաջադիմության աճ 3.8 տոկոսով /93.3% նախորդ 89.5%-ի համեմատությամբ/, ՌՕԼ ֆակուլտետում առաջադիմության աճ 9.2 տոկոսով /90% նախորդ 80.8%-ի համեմատությամբ, ՄՀ ֆակուլտետում՝առաջադիմության նվազում 1.5 տոկոսով /94.5%՝ նախորդ 96 %-ի համեմատությամբ/:

6.5 .2012-2013 ուս.տարվա ամփոփիչ ատեստավորմանը չներկայացած և անբավարար գնահատական ստացած բակալավրատի և մագիստրատուրայի ուսնողների թիվը անհամեմատ նվազել է /2012-2013 ուստարում 69 է 2011-2012 ուստարվա 95-ի համեմատ/:

6.6 .2012-2013 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորմանը 90-100 /A/ ՎԳ ստացած ուսանողների թիվը 469 է /բակալավրիատից 254 և մագիստրատուրայից 215/, 2011-2012 ուս. տարվա 425-ի համեմատ:

6.7 .Ընթացիկ ուսումնական տարում ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են

1226 ուսանող /այդ թվում նաև երկտարեցիներ/: Ըստ ֆակուլտետների պատկերը հետևյալն է՝ 291-ը մագիստրատուրայի, 131-ը ՌՕԼ ֆակուլտետի, 379-ը ՄՀ ֆակուլտետի և 425-ը ՕԼ ֆակուլտետի ուսանողներ են:

6.8 .Ընթացիկ ուսումնական տարում ամփոփիչ ատեստավորման արդյունքում դիպլոմ են ստացել 1157 շրջանավարտ /այդ թվում նաև երկտարեցիներ/: Ըստ ֆակուլտետների պատկերը հետևյալն է՝289-ը մագիստրատուրայի, 113-ը ՌՕԼ ֆակուլտետի, 359-ը ՄՀ ֆակուլտետի և 396-ը ՕԼ ֆակուլտետի ուսանողներ են:

6.9 .Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվություններում նշվում են, որ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները հիմնականում արդիական էին:

6.10. ԵՊԼՀ մագիստրատուրայի և բակալավրիատի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման ընթացքի պատշաճ կազմակերպման և վերահսկման նպատակով քննության ողջ ընթացքը տեսագրվել ու ձայնագրվել է: Վերջինիս արդյունքում նվազել է բողոքակումների թիվը:

6.11. 2012-2013 ուս. տարվա ամփոփիչ ատեստավորման ժամանակ վերականգնվեց ավարտական քննությունը գրավոր կերպով անցկացնելու ավանդույթը, որի արդյունքում արձանագրվեց առաջադիմության աճ:

7) Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնարարել բոլոր թողարկող ամբիոններին՝

7.1.Ամբիոնների նիստերում քննարկման առարկա դարձնել բակալավրիատի և մագիստրատուրայի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքները, եզրակացություններն ու հանձնաժողովների առաջարկությունները:

7.2. Խստացնել և առավել հետևողական դարձնել ամբիոնների հսկողությունը թեզերի թեմաների ընտրության, քննարկման, ինչպես նաև խորհրդատվական գործունեության համակարգված իրականացման ուղղությամբ:

7.3. Մինչև ս/թ նոյեմբերի 30-ը՝

ա/ բոլոր թողարկող ամբիոններին վերանայել և արդիականացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաները,

բ/ բոլոր թողարկող ամբիոններին վերանայել և արդիականցնել գրավոր քննության թեմաները,

գ/ ավարտական աշխատանքներում կարևորել ուսանողների՝ ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունները:

7.4. Առավել մեծ ուշադրություն դարձնել ավարտական և մագիստրոսական թեզերի հետազոտական մասին:

7.6. Համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնին՝ ուժեղացնել հսկողությունը ավարտական աշխատանքների նախապտարստման և գրախոսման գործընթացի ապահովման հարցում:

7.7. Բոլոր թողարկող ամբիոններին՝ միասնականացնել ղեկավարի և գրախոսի կողմից տրվող կածիքներին ներկայցվող չափանիշները և առաջարկել ուսումնական վարչությանը ավարտական աշխատանքի գնահատման չափանիշները հաստատելիս՝ ներառել ղեկավարի կարծիքի մեջ ավարտական աշխատանքի պատրաստման ընթացքի գնահատումը:

7.8. Անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնին՝ վերանայել և միասնականացնել վերաշարադրման տեքստերը:

7.9. Բոլոր թողարկող ամբիոններին՝ գրավոր և բանավոր ամփոփիչ ատեստավորման արդյունքների հիման վրա կատարել վերլուծություն դրանց արդյունավետության գնահատման նպատակով և արդյունքները ներկայացնել ուսումնկան մաս մինչև ս.թ. նոյեմբերի 20-ը:

7.10. Մագիստրոսական ծրագրերի իրականացման դեպարտամենտին, բոլոր ֆակուլտետներին և թողարկող ամբիոններին՝ այսուհետ բոլոր հաշվետվությունները ներկայացնել ինքնավերլուծության տեսքով:

7.10. Վերանայել և ներկայացնել առաջարկություններ արտադրական և մանկավարժական պրակտիկայի անցկացման վերաբերյալ, այն հնարավորինս համապատասխանեցնելով ուսանողների հետազոտական հետաքրքրություններին:

Սույն որոշման կատարումը դնել համալսարանի ՄԾԻԴ-ի, ՕԼ, ՄՀ, ՌՕԼ ֆակուլտետների և թողարկող ամբոինների վարիչների, իսկ հսկողությունը ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի վրա:

*****

Լսելով և քննարկելով ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի հաղորդումը ԵՊԼՀ հեռակա ուսուցման ուսումնական պլանների հաստատման վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել ԵՊԼՀ հեռակա ուսուցման ուսումնական պլանները:

*****

ԼՍԵՑԻՆ - Հեռակա ուսուցման բաժնի ղեկավար Ս. Մարգարյանի հաղորդումը 2013-2014 ուսումնական տարվա հեռակա ուսուցման բաժնի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ – Ընդունել ի գիտություն հեռակա ուսուցման բաժնի ղեկավար Ս. Մարգարյանի հաղորդումը 2013-2014 ուսումնական տարվա հեռակա ուսուցման բաժնի ընդունելության արդյունքների ամփոփման վերաբերյալ:

*****

Լսելով և քննարկելով Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի ղեկավար Ս. Կարաբեկյանի հաղորդումը Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի գործունեության վերաբերյալ՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ի գիտություն ընդունել Ս. Կարաբեկյանի հաղորդումը Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի գործունեության մասին:
2. Կենտրոնի գործունեության արդյունքները համարել բավարար:
3. ***Արձանագրել.***

4.1. Անցած ժանակահատվածում գրանցվել է կենտրոնի ունկնդիրների թվի աճ 1.2 %-ով (2011-2012 ուս. տարում՝ 59.3%, 2010-2011 ուս տարվա 58.1%-ի համեմատությամբ):

4.2. Լրացուցիչ և շարունակական կրթության դասընթացներ են իրականացվել հետևյալ ոլորտներում՝

- բուհական քննությունների նախապատրաստական դասընթացներ,
- օտար լեզուների դասընթացներ՝ անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, իսպաներեն, գերմաներեն, կորեերեն, հունարեն և հնդկերեն,
- մշակվել և իրականացվել է «Հայերենը որպես օտար լեզու» դասընթացը,
- կազմակերպվել են սեմինարներ և կլոր սեղաններ:

4.3. Արդյունավետ աշխատանք է տարվել կենտրոնի գործունեությունը միջազգային ծրագրերում ներգրավելու ուղղությամբ, մասնավորապես, գործընկերային հարաբերություններ են հաստատվել եվրոպական, ինչպես նաև տարածաշրջանային մի շարք համալսարանների և համալսարանական հարատև կրթության ճանաչված կենտրոնների հետ, այդ թվում՝ Գրացի (Ավստրիա), Համբուրգի (Գերմանիա), Տալլինի (Էստոնիա) համալսարանների, Մեծահասակների կրթության գերմանական ասոցիացիայի հետ, որի արդյունքում ձևավորված

կոնսորցիումը ստացել է 2014-2016 թթ. Տեմպուսի դրամաշնորհ՝ հարատև կրթությունը համալսարանում միջազգային չափանիշներին համապատասխան կայացնելու և հետագա կայուն զարգացումն ապահովելու համար:

4. Ելնելով վերոնշյալից ***հանձնարարել***՝
   4.1. շարունակել և առավել ակտիվացնել կենտրոնի ծրագրերում ընդգրկված ունկնդիրների թվի ավելացմանն ուղղված աշխատանքները՝ հատկապես ուշադրություն դարձնելով արտաքին կազմակերպությունների և անհատների ներգրավմանը,
   4.2. ընդլայնել համագործակցությունը հարատև կրթության ոլորտում գործունեություն իրականացնող տեղական, տարածաշրջանային և արտասահմանյան կազմակերպությունների հետ՝ նպատակ ունենալով առաջիկա երկու տարիների ընթացքում ԵՊԼՀ-ն դարձնել տարածաշրջանում հարատև կրթության ոլորտում առաջնորդ կազմակերպություն,
   4.3. ինտենսիվացնել համալսարանի կառույցների համագործակցությունը՝ ձևավորելով կենտրոնի խնդիրների լուծմանն ուղղված ներհամալսարանական ցանց,
   4.4. իրականացնել լրացուցիչ կրթության կարիքների ուսումնասիրություն,
   4.5. ակտիվացնել դպրոցների հետ կապը՝ համագործակցելով մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոնի հետ,
   4.6. աշխատանք տանել հեռավար ուսուցման եղանակների օգտագործման ուղղությամբ:
5. Սույն որոշման կատարումը դնել Լրացուցիչ և շարունակական կրթության կենտրոնի ղեկավար Ս. Կարաբեկյանի, իսկ հսկողությունը՝ ուսումնական գծով պրոռեկտոր Բ. Մարգարյանի վրա:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի 2006-2010թթ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սյուզաննա Հրաչի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1. Վերահաստատել համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի 2006-2010թթ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սյուզաննա Հրաչի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝

«**Անգլալեզու «համալսարանական վեպի» ժանրային յուրահատկությունը**» /Ժ. 01.07. «Արտասահմանյան գրականություն»/:

2. Դիմել ԲՈՀ բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Հրաչիկի Գուլանյանին /Ժ. 01.07. «Արտասահմանյան գրականություն»/ համաշխարհային գրականության և մշակույթի ամբիոնի 2006-2010թթ. հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սյուզաննա Հրաչի Պողոսյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակելու թույլտվություն ստանալու համար:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի հայցորդ Լիլիյա Վյաչեսլավի Ասրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման մասին: փոխել արձանագրության մեջ

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել կրթության կառավարման և պլանավորման ամբիոնի հայցորդ Լիլիյա Վյաչեսլավի Ասրյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության բարձրագույն կրթության համակարգերի փոխակերպումը կրթության արդի հարացույցի համատեքստում /1990-2015թթ./» /ԺԳ 00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն»/: Գիտական ղեկավար հաստատել մանկավարժական գիտությունների դոկտոր, ԱրՊՀ պրոֆեսոր Արպատ Ավանեսյանին:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի հայցորդ Էվելինա Ռոբերտի Զաղոյանի թեկնածուական ատենախոսության թեմայի վերահաստատման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ – Վերահաստատել անգլերենի բառագիտության և ոճաբանության ամբիոնի հայցորդ Էվելինա Ռոբերտի Զաղոյանի թեկնածուական ատենախոսության թեման հետևյալ ձևակերպմամբ՝ «**Հետահայում և առաջահայում տեքստային կարգերի լեզվաոճական դրսևորումները անգլոամերիկյան հուշագրություններում**» /ԺԳ. 02.07. Գերմանական լեզուներ/:

Գիտական ղեկավար՝ բ.գ.դ. Լուսինե Ֆլջյան:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը գերմաներենի ամբիոնի դոցենտ Թ. Խոջայանի հեղինակած «**Коннотативные значения лексических единиц немецкого языка**» մենագրության տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Գերմաներենի ամբիոնի դոցենտ Թ. Խոջայանի հեղինակած «**Коннотативные значения лексических единиц немецкого языка**» մենագրությունը երաշխավորել տպագրության:

*****

ԼՍԵՑԻՆ – Գիտքարտուղարի ժ/պ Կ. Ելոյանի հաղորդումը ֆիզդաստիարակության և ՔՊ ամբիոնի ավագ դասախոս Է. Սահակյանի «**Շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցներ**» ուսումնական ձեռնարկի տպագրության երաշխավորման մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ֆիզդաստիարակության և ՔՊ ամբիոնի ավագ դասախոս Է. Սահակյանի «**Շնչառական օրգանների անհատական պաշտպանության միջոցներ**» ուսումնական ձեռնարկը երաշխավորել տպագրության:

****